ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2022 թվականի
սեպտեմբերի 29-ին

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի N 2 հավելվածի 8-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ տող՝

«	9.	Անասնաբուժական ծառայությունների մատուցում	x	6,0	6,0	6,0	»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Օրենքի N 2 հավելվածի 9-րդ տողով նախատեսված գործունեության տեսակ իրականացնող անհատ ձեռնարկատերերը արտոնագրային վճար վճարող համարվելու համար առաջին անգամ դիմում-հայտարարությունները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 օրվա ընթացքում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**